ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ

Գագիկ Հարությունյան

Հոդվածում զուգահեռներ են տարվում ընթացիկ քաղաքական զարգացումների և 20-րդ դարի երկրորդ կեսին տեղի ունեցած սառը պատերազմի հետ: Եթե «Առաջին սառը պատերազմն» առճակատում էր երկու աշխարհագաղափարախոսական և աշխարհաքաղաքական հայեցակարգերի միջև, ապա ներկայինս ընթանում է մի քանի ուժային կենտրոնների միջև ու իր բովանդակությամբ բազմաբևեռ է և ասիմետրիկ: «Երկրորդ սառը պատերազմը», ինչպես և առաջինը, ենթարկվում է «զսպման քաղաքականության» տրամաբանությանը, որը, սակայն, ուղղված է հիմնականում Միացյալ Նահանգների դեմ: Արդի փուլում «զսպման ռազմավարությունն» արտահայտում է պետությունների և քաղաքակրթությունների պայքարը սեփական ինքնիշխանությունը պահպանելու համար: Հոդվածում նկարագրվում են «Բազմաբևեռ սառը պատերազմի» հիմնական դերակատարների ռազմավարությունները և նրանց փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Դիտարկվել է ավանդական մրցակիցների՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի հարաբերությունների փուլային զարգացումը ԽՍՀՄ կազմալուծումից հետո: Ներկայացվում են Երկրորդ սառը պատերազմի զարգացումների հեռանկարները:

Առաջին սառը պատերազմը *(ՍՊ)*[1] տրամագծորեն հակադիր աշխարհագաղափարախոսական և աշխարհաքաղաքական համակարգերի սկզբունքային մրցակցություն էր, որոնց համակիրները (երբեմն՝ իրենց կամքին հակառակ) համախմբվել էին իրենց առաջատարների՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի շուրջ: Վերջիններիս միջև մրցակցությունը սկիզբ էր առել դեռևս Երկրորդ համաշխարհայինի տարիներին. այն ժամանակվա «դաշնակիցները» պայ-

[1] Համարվում էր, որ *ՍՊ* արտահայտությունն առաջին անգամ օգտագործել է ամերիկացի ձեռնարկատեր և քաղաքական գործիչ *Բեռնարդ Բարուխը* 1947թ. Սենատում ունեցած իր ելույթում: Սակայն *Washington ProFile* կայքում *(#89(720), 29.10.2006)* զետեղված տեղեկության համաձայն, այդ եզրի հեղինակն անգլիացի տաղանդավոր գրող և հրապարակախոս *Ջորջ Օրուելն* է, որն օգտագործել էր այդ բառակապակցությունը դեռևս 1945թ. հոկտեմբերի 19-ի *«Tribune»*-ում հրապարակած իր հոդվածում: *ՍՊ-ի* դարաշրջանը բնորոշող «երկաթե վարագույր» եզրը շրջանառության մեջ է դրել *Ուինսթոն Չերչիլը* (Ֆուլտոն, ԱՄՆ, 1946թ. մարտի 5), իսկ ԱՄՆ ռազմավարությունը բնորոշող «զսպման քաղաքականություն» հասկացության հեղինակն է Մոսկվայում ամերիկյան դեսպանատան աշխատակից *Ջորջ Քենանը*, որը 1946թ. Վաշինգտոն ուղղած իր զեկույցներում (դրանք ստացան «երկար հեռագիր» անվանումը) շարադրել էր «խորհրդային էքսպանսիայի» վերաբերյալ իր պատկերացումները, որոնք հետագայում հանդիսացան «զսպման քաղաքականության» հենքը: Քենանը պատմության մեջ մտավ նաև նրանով, որ *«Foreign Affairs»* հանդեսում 1947-ին հրապարակած իր հոդվածում կանխատեսեց կոմունիստական համակարգի անկումը:

քարում էին ոչ միայն ընդհանուր թշնամի Գերմանիայի, այլև հաճախ նույն եռանդով՝ միմյանց դեմ: Այսինքն՝ ԱՄՆ-ԽՍՀՄ «դաշնակցային» փուլի հարաբերություններն արդեն պարունակում էին ապագա դասական *ՍՊ-ի* բաղադրիչների մի մասը[1]:

Համակարգային փոփոխություններ և անցումային փուլ. Առաջին *ՍՊ-ի* ավարտից և երկբևեռ համակարգի փլուզումից հետո գլոբալ հարթությունում միառժամանակ հաստատվեց ԱՄՆ գերակայությունը: Սակայն ներկայումս ընթանում է հերթական համակարգային փոփոխությունը. միաբևեռ աշխարհակարգը վերափոխվում է բազմաբևեռի, և այս «անցումային» փուլում զուգահեռաբար ընթանում են երկու գործընթացներ [1].

- նվազում է Միացյալ Նահանգների գերակայությունը և համապատասխանաբար խարխլվում է միաբևեռ համակարգի կառուցվածքը. այսօր ամերիկյան քաղաքական ընտրանին ընդունում է, որ անգամ իրենց գերհզոր տերությունն ի զորու չէ միայնակ «ղեկավարել» աշխարհը և արդեն մշակում է «կազմակերպված նահանջի» սցենարներ [2, 3],
- տեղի է ունենում ԱՄՆ մրցակից այն հիմնական աշխարհաքաղաքական միավորների ռազմաքաղաքական, տնտեսական և գաղափարախոսական կայացումը, որոնք արդեն պայմանավորում են կամ մոտ ապագայում պետք է պայմանավորեն միջազգային հարաբերությունների *բազմաբևեռ տրամաբանությունը:* Նման միավորների կարգավիճակ ունեն Չինաստանը, Ռուսաստանը, Իսլամական աշխարհը և հայտնի վերապահումներով՝ մայրցամաքային Եվրոպան ու լատինաամերիկյան որոշ երկրների համախումբը:

Վերոնշալ աշխարհաքաղաքական դերակատարների և ԱՄՆ-ի միջև այսօր ծավալվել է արդեն իսկ հակամարտության տեսք ընդունած մրցակցություն, որը բնութագրվում է.

- քաղաքակրթական մակարդակի գաղափարախոսական հակամարտությամբ, որն ուղեկցվում է տեղեկատվական՝ քարոզչական, հոգեբանական, հոգևոր-մշակութային գործողություններով [4],
- մրցակցի ներքաղաքական խնդիրներին ուղղակի և անուղղակի միջամտելու փորձերով,

[1] Նման իրավիճակը կարելի է օրինաչափ համարել, քանի որ Երկրորդ համաշխարհայինում ԽՍՀՄ-Գերմանիա առճակատումը և ԽՍՀՄ-ԱՄՆ-Մեծ Բրիտանիա դաշինքը կարելի է ընդունել որպես ինչ-որ չափով «քաղաքական շեղում»: Աշխարհաքաղաքական և գաղափարախոսական ոլորտում ԽՍՀՄ-ը և Գերմանիան ունեին խորքային համակարգային ընդհանրություններ, որոնք գրեթե բացակայում էին ԽՍՀՄ-ԱՄՆ-Մեծ Բրիտանիա պրագմատիկ, պատերազմական իրադրությունից բխող հարաբերություններում: Ըստ էության, սկզբունքային հակասություններն առկա էին Գերմանիայի և անգլո-ամերիկյան դաշինքի միջև: Այդ առումով ԽՍՀՄ-Գերմանիա առճակատումը կարելի է գնահատել որպես անգլո-ամերիկյան դիվանագիտության հաղթանակ:

- հատուկ ծառայությունների ոլորտում կոշտ, «առանց կանոնների» պայքարով,
- «լոկալ» պատերազմներով, որոնք ընթանում են դերակատարների անուղղակի, իսկ երբեմն՝ ուղղակի մասնակցությամբ,
- աշխարհատնտեսական սուր մրցակցությամբ։

Ընթացող զարգացումներն ավելի ու ավելի են հիշեցնում այն ամենը, ինչ տեղի էր ունենում 20-րդ դարի երկրորդ կեսին ընթացող *ՍՊ-ի* ընթացքում։ Դա թույլ է տալիս որոշ մեկնաբանների ներկա փուլը բնութագրել որպես *Երկրորդ սառը պատերազմ* [5, 6]։ Միևնույն ժամանակ, *Առաջին և Երկրորդ ՍՊ-ներն* ունեն ոչ միայն ընդհանրություններ, այլև տարբերություններ։ Դրանց համադրումը և վերլուծությունը պետք է որ նպաստի համարժեք գնահատելու ներկայիս միջազգային հարաբերությունները և, թերևս, թույլ տա կանխատեսումներ կատարել քաղաքական հեռանկարների վերաբերյալ։

«Սինթետիկ» գաղափարախոսություններ և տնտեսական համակարգեր. Կարող է միայն թվալ, թե «սոցիալիստական ճամբարի» փլուզումից հետո գլոբալ հարթությունում գերակայում է տնտեսության բացարձակ ազատական մոդելը։ Վերջինս, իրոք, կարևորագույն նշանակություն է ձեռք բերել գլոբալ տնտեսական հարթությունում, սակայն այդ մոդելը միանգամայն այլ բովանդակություն է ստանում տարբեր քաղաքակրթական գոտիներում և երկրներում (տե՛ս, օրինակ, [7])։

Նույնը վերաբերում է նաև գաղափարախոսական հայեցակարգերին և այսօր «հաղթած ունիվերսալ ժողովրդավարական մոդելի» մասին խոսելը հիմնավորված չէ. «ժողովրդավարություն» հասկացությունը տարբեր երկրներում ընկալվում և կիրառվում է ամենազանազան ձևերով ու բովանդակությամբ։ Անգամ Չինաստանը հրաժարվել է «դասակարգային պայքարից» և կառուցում է «հարմոնիկ հանրություն»՝ հրաժարվելով կոմունիստական կարգախոսներից։

Բացակայում է նաև «մաքուր» բռնատիրությունը. Արևելքի «թագավորական արքունիքներին» կից գործում են պառլամենտներ և ժողովրդավարական այլ ինստիտուտներ։ Այդ համատեքստում հատկանշական է, որ անգամ «մաքուր», «ունիվերսալ» ժողովրդավարության և ազատականության գլխավոր ջատագովը՝ ԱՄՆ-ը, իր նախկին հակառակորդ կոմունիստական մոդելից փոխառել է որոշ տոտալիտար բաղադրիչներ[1] և, ի հավե-

[1] ԱՄՆ-ում տոտալիտարիզմի արտահայտություն կարելի է համարել «Հայրենասիրության ակտի» ընդունումը, ԿՀՎ «գաղտնի բանտերի» առկայությունը և ընդհանրապես ամերիկյան հատուկ ծառայությունների իրավասությունների ընդլայնումն ու այդ ծառայություններում համակարգային փոփոխությունների հետևանքով դրանց վարչական-կառուցվածքային աննախադեպ կենտրոնացումը։

լումն, գաղափարախոսական ոլորտում ձեռք է բերել, այսպես կոչված, կրոնական և «ուլտրանացիոնալիստական» երանգներ:

Վերոնշյալ իրողությունները վկայում են այն մասին, որ գլոբալ հարթությունում «ունիվերսալ և մաքուր» տնտեսական ու գաղափարախոսական մոդելներն այսօր գոյություն չունեն: Դրանց փոխարեն գործում են մոդիֆիկացված, ինչ-որ առումով՝ *սինթետիկ, հիբրիդային* գաղափարախոսություններ ու տնտեսական մոդելներ, որոնք տարբեր մասնաչափերով պարունակում են ազատական, սոցիալիստական և քաղաքակրթական (ազգային) արժեքներ: Նման հաջող սինթեզ կամ համադրություն կատարած երկրներից ուշադրության արժանի է հատկապես Չինաստանը, որտեղ գաղափարախոսական և տնտեսական ոլորտներում կարծես թե բավական ներդաշնակ գոյակցում են ազգային-քաղաքակրթական, կոմունիստական-սոցիալիստական և ազատական մոտեցումները: Բուռն զարգացող այդ տերության օրինակը թույլ է տալիս պնդել, որ երկրների մրցունակությունը գլոբալ հարթությունում այսօր պայմանավորված է ազգային և ունիվերսալ (ազատական և սոցիալիստական) բաղադրիչներ պարունակող ներդաշնակ համակարգ ձևավորելու և կիրառելու ունակությամբ:

Արդյունքում՝ ի տարբերություն *Առաջին ՍՊ-ի* դարաշրջանի, այժմ գործող գաղափարախոսական և տնտեսական համակարգերն ունեն և՛ ընդհանրություններ, և՛ սկզբունքային հակասություններ: Քաղաքակրթական և ազգային բնույթի այդ հակասությունների համախումբը թելադրում է արդի միջազգային հարաբերությունների «սառըպատերազմյան» տրամաբանությունը գաղափարախոսական-քարոզչական ոլորտում և պայմանավորում է «քաղաքակրթությունների բախումը»:

Կարելի է ասել, որ քաղաքակրթական-ազգային ուրույնությունն այն հիմնական շարժիչ ուժն է, որը դիմադրում է ամերիկյան գլոբալ գերակայությանը և ձգտում է ձևավորել բազմաբևեռ համակարգ, որում այդ ուրույնության կրողները կարող են ունենալ լիարժեք ինքնիշխանության իրենց պատկերացումներին համապատասխան կարգավիճակ:

«Զսպման քաղաքականություն-2». Սկզբնական փուլում տարբեր աշխարհաքաղաքական դերակատարների դիմադրությունն ամերիկյան հեգեմոնիային ուներ ավելի շուտ «քաղաքացիական անհնազանդության» տեսք: Սակայն այդ գործընթացը հետզհետե համակարգվում է և, ըստ էության, սկսում է հիշեցնել *Առաջին ՍՊ-ի* տարիներին կիրառվող *«զսպման քաղաքականությունը»:* Վերջինս, ինչպես հայտնի է, պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով:

Երկրորդ համաշխարհայինում ԽՍՀՄ-ը բացարձակ ռազմական հաղ-

թանակ էր նվաճել և ստեղծել նախադեպը չունեցող, Պեկինից մինչև Բեռլին ձգվող «կոմունիստական գերկայսրություն»: «Սովետներն» ունեին հարձակողական գաղափարախոսություն և պատերազմում թրծված հզոր զինված ուժեր, որպես ֆաշիզմին հաղթած երկիր՝ բարձր միջազգային հեղինակություն: Սակայն Մոսկվան բավարարված չէր պատերազմի արդյունքներից. համարվում էր, որ աշխարհաքաղաքական ձեռքբերումները կարող էին և ավելի մեծ լինել (տե՛ս, օրինակ, [8]): Ստեղծված իրադրությունում միացյալ Արևմուտքը և նրա առաջատար ԱՄՆ-ը պետք է համախմբեին իրենց ռեսուրսները եվրասիական գերկայսրության հավակնությունները զսպելու նպատակով, և սկզբնական փուլում որպես «զսպման» հիմնական միջոց օգտագործվում էր միջուկային զենքը: Վերջինիս մենատիրական տիրապետումը ԱՄՆ-ի կողմից *ՍՊ-ի* առաջին փուլում այն հիմանական արգելանքներից էր, որը զսպեց ԽՍՀՄ հարձակողական պլանները, օրինակ, Թուրքիայի նկատմամբ: Հետագայում միջուկային սպառազինության ոլորտում ձևավորված հավասարակշռությունը գործնականում բացառեց ԱՄՆ-ԽՍՀՄ անմիջական առճակատումը:

Ներկայումս պատկերը տրամագծորեն փոխվել է: *Որպես հարձակողական, ռազմական խոշոր գերակայություն ունեցող տերություն հանդես է գալիս Միացյալ Նահանգները:* Այդ գերտերության քաղաքական ղեկավարությունը նույնպես չբավարարվեց *Առաջին ՍՊ-ում* տարած իր բացարձակ հաղթանակով, որի արդյունքում գլոբալ հարթությունում հաստատվեց ԱՄՆ քաղաքական առաջատարությունը: 2001թ. սեպտեմբերի 11-ին սկսված «հակաահաբեկչական պատերազմը», Աֆղանստանի և Իրաքի դեմ հարձակումները հավակնում էին վերահսկողություն սահմանել համաշխարհային հումքային և մարդկային ռեսուրսների նկատմամբ: Հատկանշական է, որ ամերիկյան էքսպանսիան զուգորդվում է «ազգային պետություն», «ինքնիշխանություն» հասկացությունների նսեմացմամբ: Ներկայումս այլ քաղաքական դերակատարների ջանքերն ուղղված են «զսպելու» այդ գերտերության հավակնությունները և պահպանելու սեփական ինքնիշխանությունը (երբեմն՝ քաղաքակրթական մակարդակով), *այսինքն՝ «զսպման քաղաքականությունն» այսօր վարվում է արդեն ԱՄՆ-ի դեմ:* Կարելի է ամրագրել, որ *Երկրորդ ՍՊ-ում ԱՄՆ-ի դեմ վարվող «զսպման ռազմավարությունը», փաստորեն, ազգային (քաղաքակրթական) ինքնիշխանությունը պահպանելուն ուղղված գործընթաց է:*

Ինչպես *Առաջին ՍՊ-ի* տարիներին, այնպես էլ այսօր միջուկային զենքը «զսպման» հիմնական գործիքներից է: Օրինակ՝ Ռուսաստանի միջուկային ներուժը, թերևս, միակ գործոնն էր, որը պահպանեց այդ երկրի ինչոր չափով հարաբերական ինքնիշխանությունը իննսունական թվականնե-

րին: Ինքնիշխանության պահպանման իմաստն ունեն Իրանի, Հյուսիսային Կորեայի (վերջինիս պարագայում՝ խեղաթյուրված տեսքով) և նրանց օրինակին հետևել փորձող այլ երկրների (որոնց թիվը մեծանում է) միջուկային ծրագրերը:

Միևնույն ժամանակ, «միջուկային զսպման» ռազմավարությունը (ի դեպ, որի գլխավոր տեսաբաններից է եղել Հենրի Քիսինջերը, տե՛ս [9]) Իրանի կամ Հյուսիսային Կորեայի պարագայում դեռևս այն *«սիմետրիկ զսպման»* մեխանիզմը չէ, որը գործում էր ԱՄՆ-ԽՍՀՄ սպառազինությունների մրցավազքի դարաշրջանում[1]: Այդ փուլում ենթադրվում էր, որ միջուկային բախման արդյունքում կողմերը միմյանց ջախջախիչ հարվածներ և անվերականգնելի կորուստներ են հասցնելու: Ներկայումս «նոր» միջուկային երկրների ռազմավարությունը կրում է *ասիմետրիկ* բնույթ և հենվում է «մասնակի հատուցման» հայեցակարգի վրա, որի հետևանքով կարող են խոշոր կորուստներ և վնասներ կրել ԱՄՆ ռազմակայանները կամ դաշնակիցները, իսկ որոշ պարագաներում՝ ուղղակի շրջակա միջավայրը:

Առճակատող ռազմաքաղաքական դաշինքների բացակայությունը և սպառազինությունների սիմետրիկ մրցավազքի մերժումը. *Առաջին ՍՊ-ի* դարաշրջանը բնութագրող առանցքային հասկացություններից էր «սպառազինությունների մրցավազքը», որը Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության առաջնորդությամբ ընթանում էր «Ազատ աշխարհի» և «Սոցիալիստական ճամբարի» միջև: Կողմերի «ռազմական գործիքներն» էին երկու խոշոր դաշինքները՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությունը (ՆԱՏՕ, հիմնվել է 1949թ.) և «Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը» (ՎՊԿ, 1955-1991թթ.):

Նման երկբևեռ ռազմական համակարգում «սպառազինությունների մրցավազքը» հիմնականում *սիմետրիկ* բնույթ էր կրում. ամերիկյան և խորհրդային զինված ուժերը տիրապետում էին գրեթե հավասար ներուժի: Ժամանակի ընթացքում ձևավորված ռազմական հավասարակշռության խախտումը որևէ ոլորտում կողմերը հիվանդագին էին ընդունում և դրությունը շտկելու համար դիմում էին հնարավոր բոլոր միջոցների: Ստեղծված իրավիճակը ծանր էր անդրադառնում հատկապես խորհրդային տնտեսության վրա, որը զգալիորեն զիջում էր արևմտյանին: Համարվում է, որ ԽՍՀՄ փլուզման տնտեսական պատճառներից մեկը «սպառազինությունների մրցավազքն» էր, որը «սովետներին» ուժասպառ անելու նպա-

[1] *Առաջին ՍՊ-ի* ընթացքում, հատկապես Մոսկվայի կողմից, երբեմն հնչեցվում էր ԱՄՆ սպառնալիքներին *«ասիմետրիկ»* պատասխան տալու պատրաստակամության մասին: Սակայն այդ *«ասիմետրիան»* տեխնիկական բնույթի էր և չէր խախտում «սպառազինությունների մրցավազքի» *«սիմետրիկ»* զարգացման տրամաբանությունը:

տակով ԱՄՆ-ի կողմից կիրառվող ռազմավարություն էր:

Ներկայիս անցումային ժամանակաշրջանին հակամարտող ռազմաքաղաքական դաշինքները բնորոշ չեն: Որպես «ժառանգություն» *Առաջին ՍՊ-ի* ՝ շարունակում է գործել Հյուսիսատլանտյան կազմակերպությունը: Սակայն անգամ ՆԱՏՕ-ին հատուկ են որոշակի ներքին հիմնախնդիրներ՝ պայմանավորված հյուսիսատլանտյան և եվրակենտրոն գաղափարախոսական բնույթի հակասություններով: Այն այլևս չի ընկալվում որպես Եվրոպան պաշտպանելու առաքելություն կատարող կազմակերպություն և այսօր ավելի շատ, քան նախկինում, սպասարկում է ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի շահերը: Սակայն բոլոր պարագաներում ՆԱՏՕ-ն, որը գլոբալ կազմակերպություն դառնալու հավակնություններ է ցուցաբերում, չունի հավասարազոր մրցակիցներ և գերակայում է ռազմական հարթությունում: Այդ ոլորտում անհամեմատ ավելի համեստ դիրքեր է գրավում նախկին խորհրդային հանրապետություններից մի քանիսը ներառող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ), իսկ զարգացման մեծ հեռանկարներ ունեցող Շանհայի համագործակցության կազմակերպությունը (ՇՀԿ) որպես ռազմական դաշինք դեռևս չի ձևավորվել:

Այսօր, ի տարբերություն *Առաջին ՍՊ-ի* դարաշրջանի, ռազմական ոլորտում հաստատվել է Միացյալ Նահանգների կասկած չհարուցող գերազանցությունը: Այդ տերության ռազմական բյուջեն հավասար է աշխարհում կատարվող ռազմական ծախսերի գրեթե կեսին, իսկ աշխարհով սփռված ամերիկյան զինված ուժերը ռազմական տեխնիկայի և ռազմարվեստի ոլորտներում էապես գերազանցում են բոլորին և մասնավորապես՝ նախկին «գլխավոր հակառակորդի» իրավահաջորդ Ռուսաստանին:

Միևնույն ժամանակ, անգամ բացարձակ ռազմական առավելությունը չի կարող երաշխավորել ԱՄՆ գաղափարախոսական, քաղաքական և տնտեսական գերակայությունն աշխարհում: Դրա օրինակն է այն, ինչ տեղի է ունենում Իրաքում և, թերևս, ինչ տեղի կունենա Աֆղանստանում. այս կամ այն երկրի ռազմական օկուպացիան դեռևս չի նշանակում լիարժեք վերահսկում ընթացող գործընթացների վրա:

Այս պնդումից չի հետևում, որ ռազմական ներուժը երկրորդական գործոն է և չի կարևորվում: Դա ընդամենը վկայում է այն մասին, որ *այսօր, առավել քան նախկինում, կարևորագույն նշանակություն է ձեռք բերել քաղաքակրթական, գաղափարախոսական-տեղեկատվական, սոցիալական, տնտեսական և բնական՝ հատկապես էներգետիկ, ռեսուրսներին տիրապետելը: Ելնելով այս իրողությունից՝ Երկրորդ ՍՊ-ի դերակատարները հիմնավորված կերպով խուսափում են անհեռանկարային (հատկապես ԱՄՆ պարագայում) դասական սպառազինությունների մրցավազքից՝ առանձնա-*

հատուկ ուշադրություն դարձնելով իրենց ինքնիշխանությունն ապահովող ոչ միայն ռազմական, այլև տարաբնույթ այլ ռեսուրսների զարգացման վրա:

Նման իրադրությունը պայմանավորում է այսօրվա մրցակցության ասիմետրիկ բնույթը, քանի որ աշխարհաքաղաքական դերակատարները ԱՄՆ-ի, իսկ երբեմն նաև միմյանց դեմ կիրառում են տարբեր տիպի «սպառազինություններ», եթե պայմանականորեն այդպես անվանենք վերոնշյալ ռեսուրսները: Այս ամենի համատեքստում իմաստ ունի համառոտ դիտարկել որոշ, այսպես կոչված, «դիմակայող երկրների»՝ ԱՄՆ-ի հետ փոխհարաբերությունների առանձնահատկությունները և վերլուծել ավանդական մրցակիցներ Ռուսաստան-Միացյալ Նահանգներ հարաբերությունների դինամիկան:

Եվրոպա-ԱՄՆ. Արդի բազմաբևեռ *ՍՊ-ում* յուրահատուկ դիրք է գրավում մայրցամաքային Եվրոպան, որի առաջատարներ Գերմանիան և Ֆրանսիան *Առաջին ՍՊ-ի* ավարտից հետո փորձում են դուրս գալ ամերիկյան ազդեցության գոտուց և վարել ինքնուրույն քաղաքականություն: Հատկանշական է, որ Եվրամիության ձևաչափն այդ տերությունների համար միաժամանակ և՛ լիարժեք աշխարհաքաղաքական միավորի վերափոխվելու հնարավորություն է, և՛ յուրովի «զսպաշապիկ», քանի որ այդ ձևաչափի միջոցով ԱՄՆ-ը կարողանում է իրագործել իր համար շահավետ ծրագրերը: Հյուսիսատլանտյան և եվրակենտրոն աշխարհաքաղաքական հայեցակարգերին բնորոշ հակասությունները հանգեցնում են նրան, որ ԱՄՆ-Եվրոպա հարաբերություններում արդեն նշմարվում են «սառըպատերազմյան» նախանշանները, որոնք նկատվում են նաև տնտեսական և տեղեկատվական հարթություններում: Այս վերջինի համատեքստում հատկանշական է ֆրանսիական շուրջօրյա հեռուստակայանի ստեղծումը, որը պետք է մրցակցի *CNN-ի* հետ և, ըստ նախագահ Շիրակի, դիմակայի «անգլոսաքսոնյան մշակութային իմպերիալիզմին»[1]:

«Իսպանախոսներ» և ԱՄՆ. քաղաքակրթական պատերազմի շարունակությունը. Այսօր ուշադրության կենտրոնում են նաև Լատինական Ամերիկայում ընթացող գործընթացները, որոնց պատմական արմատները տանում են մինչև իսպանական և անգլոսաքսոնյան քաղաքակրթությունների հակամարտությունը և լատինաամերիկյան հոգեկերտվածքին բնորոշ ազատագրական, հետագայում «ձախ» երանգ ստացած շարժումները: «Լատինաամերիկյան» սառը պատերազմը փաստորեն ընթանում է ԱՄՆ առաջին «կայսերական» հայեցակարգի՝ Մոնրոյի դոկտրինի դեմ: Նոր երանգ

[1] Տե՛ս http:/www. guardian.co.uk/print/0,,329654306-1110633,00html:

կարելի է համարել նախկին քաղաքակրթական մրցակցության յուրահատուկ վերափոխումը և տեղափոխումը բուն Միացյալ Նահանգներ, որտեղ անգլիալեզու (անգլոսների) և իսպանալեզու (լատինոսների) հատվածների առկայությունը վերաճում է ժողովրդագրական լուրջ հիմնախնդրի. տեսանելի ապագայում «լատինոսները» կարող են մեծամասնություն կազմել ԱՄՆ-ում, ինչը նույնպես, որոշ վերապահումներով, կարելի է դիտարկել որպես ասիմետրիկ մարտահրավեր այդ տերությանը:

Իսլամական աշխարհ-ԱՄՆ. Այս հարթությունում զարգացումները, թերևս, ամենադրամատիկն են և ընթանում են հակաահաբեկչական ասիմետրիկ պատերազմի կանոններով: Սակայն այդ ոլորտում առաջին պլան են մղվել ոչ այնքան ահաբեկչական կազմակերպությունները և մահապարտ շահիդների գործողությունները, որոնց գործունեությունն Իրաքում ստիպում է ամերիկացիներին նահանջել, որքան Իրանը: Այդ տարածաշրջանային տերությունը, ունենալով քաղաքակրթական ավանդույթներ, ազգային-կրոնական գաղափարախոսություն և էներգետիկ ռեսուրսներ, արագորեն վերափոխվում է «ասիմետրիկ» գործող գլոբալ նշանակության դերակատարի:

ՉԺՀ-ԱՄՆ. ասիմետրիկ աշխարհընկալում. Այս տերությունների միջև ծավալված մրցակցությունը սկզբունքային բնույթ է կրում: Փորձագիտական գնահատականների համաձայն՝ ՉԺՀ-ն տեսանելի ապագայում իր ընդհանրական ներուժով կհավասարվի ԱՄՆ-ին և արդեն դիտարկվում է որպես «այլընտրանքային գերտերություն»: ՉԺՀ-ն տիրապետում է հսկայական արդյունաբերական և մարդկային ռեսուրսների և կարևորագույն տնտեսական ցուցանիշներով (ՀՆԱ - $8.9 տրլն, ռազմական ծախսեր՝ $90 մլրդ)[1] զիջում է միայն ԱՄՆ-ին (համապատասխանաբար $12.4 տրլն և $561 մլրդ՝ 2005թ.): Կարևորագույն հանգամանք է նաև այն, որ Չինաստանի պետական ու հանրային համակարգն առաջնորդվում է մրցունակ և արդյունավետ, սակայն այլ արժեքային հարթության վրա հենված գործող գաղափարախոսությամբ ինչը, թերևս, ամենալուրջ մարտահրավերն է «ունիվերսալ ժողովրդավարության» առաջատար Միացյալ Նահանգների համար (տե՛ս նաև [1]):

Ուժերի նման հարաբերական հավասարակշռությունը պայմանավորում է այդ տերությունների կանոնակարգված հարաբերությունները. Վաշինգտոնը Պեկինի նկատմամբ, ի տարբերություն այլոց, անհամեմատ ավելի զուսպ է: Այդ հարաբերություններն ինչ-որ չափով հիշեցնում են ԱՄՆ-

[1] ՀՆԱ-ն՝ ըստ իրական գնողունակության (2005թ.), ռազմական ծախսերը՝ ըստ *The Military Power of the People's Republic of Chine, (Anual Report on Congress),* p.22, 2005:

ԽՍՀՄ հարաբերությունները նախորդ դարի 70-ականներին, երբ վերջիններիս ռազմական հնարավորությունները հավասարակշռված էին: Սակայն, ի տարբերություն խորհրդայինի, չինական տնտեսությունն ամերիկյանի համար լուրջ մրցակից է: Հատկանշական է, որ ամերիկյան արտարժույթի մենատիրության դեմ թափ հավաքող գործընթացում, որպես *դոլարի* այլընտրանք, *եվրոյի* հետ զուգահեռ դիտարկվում է նաև *յուանը:*

Ներկայումս ԱՄՆ-ՉԺՀ հարաբերություններում «սեղանին է դրված» ոչ միայն տարածաշրջանային առաջատարության խնդիրը: Այսօր Չինաստանն ակտիվ քաղաքականություն է վարում նաև եվրասիական ուղղությամբ (Կենտրոնական Ասիա, Մերձավոր և Միջին Արևելք) և, ի հավելումն, ներթափանցում է աֆրիկյան և հարավամերիկյան մայրցամաքներ: Այս ամենի առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի *ՇՀԿ* ձևավորումը, որն ապագայում կարող է ռազմաքաղաքական հակակշիռ կազմել Հյուսիսատլանտյան միությանը:

Այսպիսով, ԱՄՆ-ՉԺՀ մրցակցությունն ընթանում է գլոբալ առաջատարության շուրջ, ինչը և թելադրում է այդ տերությունների հարաբերությունների «սառըպատերազմյան բնույթը»: Որոշակի մոտավորությամբ կարելի է պնդել, որ ԱՄՆ-ՉԺՀ մրցակցությունը, հատկապես տնտեսական դաշտում, սիմետրիկ բնույթ է կրում: Այդ տերությունների հարաբերությունների «ասիմետրիան» գլխավորապես արտահայտվում է քաղաքական-հասարակական ռազմավարությունների ոլորտում, որտեղ կողմերը տրամագծորեն տարբեր փիլիսոփայություններ են դավանում:

Ռուսաստան-Միացյալ Նահանգներ. Ուժերի ասիմետրիկ հավասարակշռությունը բնորոշ է նաև ԱՄՆ-ՌԴ հարաբերություններին: Վերջինիս ՀՆԱ-ն բազմապատիկ զիջում է ամերիկյանին, սակայն միջուկային ուժերի հարաբերական հավասարակշռությամբ, աշխարհագրական դիրքով և հսկայական տարածքով (որոնք նույնպես արժեքավոր աշխարհաքաղաքական ցուցանիշներ են), ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոների պաշարներով (ըստ որոշ գնահատականների՝ Ռուսաստանը տիրապետում է նման պաշարների 20-30%-ին) այդ տերությունը նույնպես խոշոր աշխարհաքաղաքական դերակատար է հանդիսանում:

Առաջին ՄՊ-ի գլխավոր դերակատարների՝ ԱՄՆ-ի և ՌԴ-ի փոխհարաբերությունները սկզբունքային նշանակություն ունեն: Դրանք վերջին տասնհինգ տարում ենթարկվել են հետևյալ երեք փուլային փոխակերպումներին:

1991-1999թթ. *«կաթվածահարության փուլ».* Ռուսաստանի նկատմամբ ամերիկյան քաղաքականությունը հետսառըպատերազմյան տարիներին

կարելի է բնութագրել որպես պատերազմում հաղթած տերության գործողություններ պարտվածի հանդեպ: Արդյունքում՝ Ռուսաստանի ազդեցությունից դուրս եկան Արևելյան Եվրոպան և նախկին ԽՍՀՄ հանրապետությունների զգալի մասը: Հարցականի տակ էր և՛ Ռուսաստանի տարածքային ամբողջականությունը (Հյուսիսային Կովկասը գործնականում դուրս էր եկել վերահսկողությունից, քննարկվում էին այդ երկիրը ութ-ինը հատվածի մասնատելու սցենարները), և՛ ինքնիշխանությունը. ներքին դաշտում գերակայում էր արտաքին ուժերի պատվերը կատարող քաղաքական և տնտեսական ընտրանին:

Հատկանշական է, որ ԱՄՆ և ընդհանրապես Արևմուտքի գործողությունները գաղափարական, քաղաքական և տնտեսական ոլորտներում կաթվածահար Ռուսաստանի կողմից որևէ լուրջ դիմադրության չէին հանդիպում: Հարավսլավական իրադարձությունների ընթացքում արտգործնախարար Ե.Պրիմակովի «ինքնաթիռային դիվանագիտությունը» կամ ռուս դեսանտայինների «կոսովյան երթը» զգացմունքային բնույթ էին կրում ու որևէ շոշափելի հետևանք չէին կարող ունենալ և չունեցան: Հարաբերական հաջողությունները Մերձդնեստրում և կովկասյան հակամարտությունների գոտում բրիտանական փորձագետներն արդարացիորեն վերագրում են ավելի շուտ ինքնավար գործող ռուս գեներալներին, քան պաշտոնական Մոսկվայի նպատակաուղղված քայլերին:

Բնորոշ է, որ 1999թ. վարչապետ նշանակված և Չեչնիայում ռազմական գործողություններ ծավալած Վ.Պուտինը[1] ներքին իրադրության վերաբերյալ իրեն ուղղված հարցին պատասխանել էր, թե «Ռուսաստանում ամենուր Չեչնիա է»:

2000-2005թթ. «պասիվ դիմադրության» կամ «լատենտային» (թաքնված) ՍՊ-ի փուլ. Պուտինի իշխանության գալու սկզբնական շրջանում ռուս-ամերիկյան «սուվերեն-վասալ» բնույթի հարաբերություններում դեռևս էական փոփոխություններ դժվար էր նկատել: Ավելին. 2001թ. սեպտեմբերի 11-ին հաջորդեց ԱՄՆ-ՌԴ հարաբերությունների թվացյալ ջերմացում «հակաահաբեկչական կոալիցիայի» ձևաչափում: Սակայն միջինասիական հանրապետություններում ամերիկյան «ժամանակավոր» ռազմակայանների տեղակայումը և դրանց դուրսբերման վերաբերյալ նախնական պայմանավորվածությունների խախտումը, ամերիկյան զինծառայողների ժամանումը Վրաստան, ՆԱՏՕ և ԵՄ շարունակական «առաջ-

[1] Վ.Պուտինի սրընթաց կարիերայի հետ կապված վեճերը շարունակվում են առայսօր. ոմանք դա վերագրում են Բ.Ելցինի կամային որոշմանը, այլոք՝ գործարար Բերեզովսկու ինտրիգին, համաձայն մեկ այլ, կոնսպիրոլոգիական երանգ ունեցող վարկածի՝ Վ.Պուտինի նախագահ դառնալը «չեկիստական բազմաքայլ դավադրության» արդյունք էր:

խաղացման» գործընթացները բավական արագ ցրեցին Կրեմլի ղեկավարության պատրանքները ԱՄՆ-ի հետ ռազմավարական գործընկերության հնարավորության վերաբերյալ: Իր հերթին՝ Վաշինգտոնը, կանխատեսելով Ռուսաստանի հնարավոր վերականգնումը, փորձում էր առավել արագ իրագործել իր ծրագրերը: Հենց այս փուլում Միացյալ Նահանգները, առաջնորդվելով սառը պատերազմի տրամաբանությամբ, զուգակցելով «հակաահաբեկչական կանխարգելիչ պատերազմի» ռազմաքաղաքական և «ունիվերսալ դեմոկրատական համակարգ հաստատելու» գաղափարախոսական (մասնավորապես ձևավորվում էր Ռուսաստանի՝ որպես չկայացած երկրի, տեղեկատվական կերպարը) ռազմավարությունները, հասավ տպավորիչ հաջողությունների: Դրանցից, մասնավորապես, նշենք հետևյալները.

- հստակ հակառուսական դիրքորոշում ունեցող Բալթյան հանրապետությունները և Արևելյան Եվրոպայի երկրների մի զգալի մասն ընդունվեցին (կամ հաստատվեցին նրանց ընդունվելու ժամկետները) ՆԱՏՕ,
- ԱՄՆ-ը, իրեն ձեռնտու տարբերակով, միակողմանիորեն դուրս եկավ Հակահրթիռային պաշտպանության պայմանագրից. այդպիսով փաստորեն խախտվեց երկու երկրների միջև ձևավորված հրթիռամիջուկային հավասարակշռությունը,
- Վրաստանում և Ուկրաինայում «գունավոր» հեղաշրջումների արդյունքում ձևավորվեցին հստակ արևմտամետ և հակառուսաստանյան ուղղվածություն ունեցող վարչախմբեր,
- բեկանվեց Մերձդնեստրյան հակամարտության կարգավորման՝ նախապես բոլոր կողմերի համար ընդունելի (ենթադրվում էր Մոլդովայի Հանրապետության ֆեդերալացում, որի կազմում կլիներ նաև Մերձդնեստրը), այսպես կոչված, «Կոզակի ծրագիրը». այդպիսով Մոլդովան փաստորեն դուրս բերվեց Ռուսաստանի ազդեցության գոտուց:

Ի տարբերություն նախկինի, այս փուլում Պուտինի վարչակազմը փորձում էր իր ունեցած հնարավորությունների չափով հակազդել վերոնշյալ գործողություններին: Ըստ էության, Մոսկվայի քայլերը նույնպես ենթարկվում էին սառը պատերազմի տրամաբանությանը, սակայն կրում էին «թաքնված»՝ լատենտային բնույթ, և անհամաձայնությունները դիվանագիտական հարթությունում ու տեղեկատվական դաշտում ավելի քան զուսպ էին ներկայացվում. թույլ Ռուսաստանը չուներ անհրաժեշտ ռեսուրսներ արդյունավետ դիմակայության համար:

Միևնույն ժամանակ, Ռուսաստանին հաջողվեց վերականգնել երկրի

կառավարելիությունը, զարգացնել տնտեսությունը (առանցքային նշանակություն ունեցավ էներգետիկ ռեսուրսների վրա մասնակի պետական վերահսկողության սահմանումը), բարելավել զինված ուժերի վիճակը: Արտաքին ոլորտում Ռուսաստանը կարողացավ այս կամ այն չափով արդյունավետ քաղաքականություն վարել Մոսկվա-Բեռլին-Փարիզ, Մոսկվա-Պեկին և Մոսկվա-Թեհրան) աշխարհաքաղաքական ուղղություններով, որոշակիորեն վերականգնվեց այդ երկրի հեղինակությունն ԱՊՀ հանրապետություններում:

2005թ. և այդուհետ՝ բացահայտ սառը պատերազմ. ԱՄՆ-ՌԴ հարաբերությունների նոր փուլի սկիզբ պետք է ընդունել 2005թ. հուլիսի 1-ը, երբ Չինաստանը և Ռուսաստանը, համագործակցելով ՇՀԿ ձևաչափում, ստորագրեցին համատեղ հռչակագիր, որի դրույթներն ուղղակիորեն դեմ էին ամերիկյան գաղափարախոսական-ռազմավարական դրույթներին: Նման փաստաթղթի ի հայտ գալը վկայությունն էր այն իրողության, որ այդ երկու տերություններն արդեն տիրապետում են անհրաժեշտ ներուժի, որպեսզի հանդես գան ԱՄՆ գերակայության դեմ: Այդ իրողության արտահայտություններն էին նույն 2005-ին Ուզբեկստանում «գունավոր» հեղաշրջման ամերիկյան սցենարի տապալումը և դրան հաջորդած՝ ԱՄՆ ռազմակայանի դուրսբերումն այդ երկրից, ինչով սկիզբ դրվեց Միջին Ասիայից ԱՄՆ «դուրսմղման» գործընթացին: Ռուսաստանին հաջողվեց մասնակիորեն «կոտրել» իր համար անբարենպաստ իրավիճակը նաև Ուկրաինայում, որտեղ 2006թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձևավորվեց մոսկովյան կողմնորոշում ունեցող կառավարություն:

Սկզբունքային նշանակություն ունեցան նաև Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող զարգացումները: Այդ խնդրում Մոսկվայի ընդունած ճկուն դիրքորոշումը համահունչ էր Պեկինի, իսկ որոշ կետերում՝ ֆրանսիական և գերմանական մոտեցումներին. այն փաստորեն ընդունվեց միջազգային հանրության կողմից և ստիպեց ԱՄՆ-ին կարճաժամկետ հեռանկարում զիջել դիրքերը (այս խնդրում կարևոր դերակատարում ունեցավ նաև մերձավորարևելյան վերջին պատերազմը, որի արդյունքները բարենպաստ էին Ռուսաստանի համար):

Այսօր «Ամերիկյան վտանգի» վերաբերյալ տեսակետը դարձել է ռուսաստանյան քաղաքական կուրսի բաղադրիչ, և դրա վկայությունն է 2006թ. ամռանը Պետդումայում ներկայացված Վ.Ֆալինի և Գ.Եվստաֆևի զեկույցը՝ նվիրված ռուս-ամերիկյան հարաբերություններին [10]: Համաձայն այդ վերլուծության (որը յուրովի պատասխան է 2006թ. գարնանը ԱՄՆ-ում «Միջազգային հարաբերությունների խորհրդի» կողմից պատրաստված «Ռուսաս-

տանի սխալ ճանապարհը» փաստաթղթի)՝ ԱՄՆ հիմնական նպատակը Ռուսաստանի քաղաքական կուրսը փոխելն է. այլ խոսքերով՝ ամրագրվում է, որ ԱՄՆ-ը Ռուսաստանի հակառակորդն է՝ այստեղից բխող առաջին հերթին Մոսկվայի համար բոլոր հետևություններով: Այս համատեքստում տեղին է հիշել ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսի հայտարարությունը, թե Ռուսաստանը, Չինաստանի և Իրանի հետ միասին, այն երկրներից է, որոնց հետ բացառված չեն ռազմական հակամարտությունները:

Վերոնշյալ գործընթացներն ուղեկցվում են ռուսական նոր գաղափարախոսության ձևավորմանը զուգընթաց, որը ենթադրում է համապատասխան քարոզչական գործունեության ծավալում: Ռուսաստանյան ԶԼՄ մի հատվածն անհամեմատ ավելի բարձր պրոֆեսիոնալ մակարդակով, քան դա կատարվում էր խորհրդային տարիներին, փորձում է ձևավորել ԱՄՆ ոչ շահեկան կերպարը:

Ակնհայտ է, որ ԱՄՆ-ՌԴ հակասությունները չեն սահմանափակվում վերոնշյալ հանգամանքներով: Անողոք պայքար է գնում էներգակիրների շուկայում, որտեղ ամերիկյան (Բաքու-Ջեյհան նավթամուղ, Բաքու-Էրզրում գազամուղ) և ռուսաստանյան (Բուրգաս-Ալեքսանդրապոլիս նավթամուղ, Հյուսիսեվրոպական գազամուղ) նախագծերն աշխարհատնտեսական առումով հակամարտող բնույթ են կրում: Գրեթե նման իրավիճակ է տիրում նաև այլ ոլորտներում: Հակասությունների այս համախումբը և դրանց շուրջ ծավալված գաղափարախոսական ու տնտեսական առճակատումը ենթարկվում են (չնայած հայտնի տարբերություններին) գրեթե նույն օրինաչափություններին, ինչ նախորդ դարում տեղի ունեցած սառը պատերազմը:

Հեռանկարներ. Արդի բազմաբևեռ և ասիմետրիկ սառը պատերազմը գտնվում է զարգացման նախնական փուլում: Միացյալ Նահանգների քաղաքական ռեսուրսների նկատվող նվազումը և մրցակից երկրների հզորացումն առավել կոշտ են դարձնում «սառը» առճակատումը:

Այնինչ բազմաբևեռ համակարգի հնարավոր ձևավորումը «Սառը պատերազմ – 2» պայմաններում կարող է հանգեցնել այն մասնակիցների շահերի բախմանը, որոնք ըմբոստացել են «ամերիկյան գերիշխանության» դեմ: Միջուկային զենքի տարածումն էականորեն կդժվարացնի միջազգային հարաբերությունների կարգավորումը և սպառազինությունների նկատմամբ վերահսկողության մեխանիզմների մշակումը: Նման պայմաններում «լիցքաթափման քաղաքականության» իրականացումը, ինչպես դա եղավ Առաջին սառը պատերազմի ժամանակ, անհամեմատ ավելի բարդ կլինի:

Այսպիսի զարգացման պարագայում, մասնավորապես, կպահանջվի

«տարածաշրջանային անվտանգություն» հասկացության հետ կապված բազում դրույթների վերիմաստավորում: Որոշ երկրների համար հրատապ կդառնան աշխարհաքաղաքական կողմնորոշման հիմնախնդիրները, և նրանք ստիպված կլինեն հարմարվել բազմակենտրոն գլոբալ քաղաքականության նոր իրողություններին:

Դեկտեմբեր, 2006թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Гагик Арутюнян,* «Переходное состояние: геоидеологический фактор в глобальных развитиях», 21 Век, #2, с.3, 2005, *Гагик Арутюнян,* «Промежуточная война», 21 Век, #2, с.3, 2006.
2. *Cristopher Layne,* The Unipolar Illosion Revisited (The Coming End of the United States Unipolar Moment), International Security, Vol.31,#2, p. 7 (fall 2006)., *Richard N. Haass,* «The New Middle East», Foreign Affairs, http://www.foreignaffairs.org/20061101faessay85601/richard-n-haass/the-new-middle-east.html
3. *Дмитри К. Саймс*, "Нереалисты", http://www.russ.ru/docs/125481293?user_session=a4a4a8b6395cde95de935bf9c8340226
4. *Гагик Арутюнян,* «Цивилизационный фактор в контексте проблем информационной безопасности», 21Век, #1(3) с.3, 2006.
5. *Гагик Тер-Арутюнянц,* «Холодная война-2 (с геоидеологической перспективой)», Голос Армении, 05.12.2003.
6. Влад Собелл, «Психологические основы новой «холодной войны»», Johnson's Rusia List, 22.09.2006, http://www.inosmi.ru/stories/02/07/18/3106/230049.html, *Оливер Морган,* «Права на нефть и газ: оружие новой «холодной войны»», The Observer, 16 октября 2006 http://www.inosmi.ru/translation/230482.html
7. *Стивен Роузфилд,* «Сравнительная экономика стран мира», Москва, 2004.
8. *Виктор Суворов,* «Последняя Республика», Москва, 1995.
9. *Генри Киссингер,* «Ядерное оружие и внешняя политика», Москва, 1959.
10. *Валентин Фалин, Геннадий Ефстафьев,* «О вероятном сценарии действий США в отношении России в 2006-2008 годах», Политический класс, #21 сентябрь, 2006, http://www.politklass.ru/cgi-bin/issue.pl?id=626

МНОГОПОЛЯРНАЯ ХОЛОДНАЯ ВОЙНА

Гагик Арутюнян

Резюме

По мере расшатывания однополярной системы политические процессы все больше подчиняются логике, характерной для Первой холодной войны 1946-1991гг. Отличие же состоит в том, что жесткая конфронтация двух сверхдержав той эпохи сегодня сменилась более сложным и многоуровневым процессом «сдерживания» Соединенных Штатов со стороны сторонников многополярного миропорядка. Превосходство США в военной сфере вынуждает их противников и конкурентов делать основной упор на асимметричные методы противодействия.

Между тем возможное формирование многополярной системы в обстановке «Холодной войны-2» может привести к столкновению интересов тех участников, которые сегодня ополчились против «американской гегемонии». Распространение ядерного оружия существенно затруднит регламентацию международных отношений и выработку механизмов контроля над вооружениями. В таких условиях реализация «политики разрядки» – как то было во времена Первой холодной войны – будет намного сложнее.